

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հայաստանում ընթացող սահմանադրական բարեփոխումների առանցքային խնդիրներից է ՀՀ Նախագահի կարգավիճակի արմատական վերանայումը և, համապատասխանաբար, նրա գործառույթային կառուցակարգի ու լիազորությունների փոփոխությունը²: Այս հիմնահարցի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս ընթացող սահմանադրական բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է կառավարման խառը՝ կիսանախագահական ձևից անցում կատարել խորհրդարանական կառավարման, ինչը ենթադրում է պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորությունների և փոխհարաբերությունների միանգամայն նոր համակարգ: Նախագահի կարգավիճակի հարցը բավական տարողունակ է: Այս հոդվածի շրջանակներում կանդրահատանք սահմանադրական բարեփոխումներում արտացոլված ՀՀ Նախագահի՝ որպես Սահմանադրության երաշխավորի էությանը և իրավական հիմքերին:

ՀՀ Նախագահի կարգավիճակը նորովի ամրագրված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեով ընդունված Սահմանադրության (փոփոխություններով) (այսուհետ՝ Սահմանադրության փոփոխություններ կամ փոփոխված Սահմանադրություն) 123-րդ հոդվածում: Ըստ նշված հոդվածի՝ Հանրապետության Նախագահը պետության գլուխն է, հետևում է Սահմանադրության պահպանմանը, իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է և առաջնորդվում է բացա-

¹ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Վ. Այվազյան:

² Տե՛ս «ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», մշակվել է ՀՀ սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից, Երևան, 2014 թ., էջ 26-35, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ, [http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf](http://www.parliament.am/drafts.php?sel=approved&lang=arm,Ն-849-21.08.2015,05.10.2015-ՊԻ-011/0, գլուխ 4-6, Սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներ, Երևան 2015 թ., <a href=), էջ 23-57:

ռապեւ համապետական և համազգային շահերով և իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով: Մեջբերված հոդվածի վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել ՀՀ Նախագահի հետևյալ հիմնական գործառույթները՝ ա) պետության գլխի գործառույթ և բ) Սահմանադրության երաշխավորի գործառույթ: Այս երկու գործառույթները սերտորեն փոխկապակցված են և հանդիսանում են Նախագահի կարգավիճակի միասնական սահմանադրաիրավական հիմքը: ՀՀ Նախագահի կարգավիճակի այդպիսի սահմանումը համապատասխանում է խորհրդարանական կառավարման ձևի պետություններում Նախագահի ինստիտուտին վերապահվող սահմանադրաիրավական դերին և նշանակությանը¹:

¹ Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Նախագահը հանդիսանում է սահմանադրական կարգի կարգավորիչը: Քանի որ սահմանադրական կարգն այնպիսի համակարգ է, որի պայմաններում պետության կողմից ապահովվում է մարդու և քաղաքացու իրավունքների պահպանումը, և, համապատասխանաբար, պետությունը գործում է Սահմանադրությանը համապատասխան, Նախագահը Հունաստանում փաստորեն հանդիսանում է սահմանադրական կառուցակարգերի և պետության սահմանադրական գործունեության կարգավորիչն ու երաշխավորը, ինչը նշանակում է, որ առնվազն արարողակարգային իմաստով նա հանդիսանում է Սահմանադրության երաշխավորն ու պետության գլուխը: Իտալիայի սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Իտալիայի Նախագահը պետության գլուխն է և ներկայացնում է ազգային միասնությունը: Այս ձևակերպումը ևս, ըստ էության, խոսում է այն մասին, որ Նախագահը հանդիսանում է սահմանադրական կարգի, և որ նույնն է՝ Սահմանադրության երաշխավորը: Պրոֆեսոր Վ. Չիրկինի կարծիքով, պետության գլուխն իրականացնում է սահմանադրական կարգի պաշտպանի կամ երաշխավորի գործառույթ, որը նշանակում է նաև Սահմանադրության պաշտպանության գործառույթի իրականացում (Чиркин В.Е., Глава государства, Москва, 2010, стр. 192): Իսկ գերմանացի իրավագետներ Իգենզեեն և Կիրխոֆը գտնում են, որ խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող Գերմանիայում նախագահն առնվազն արարողակարգային մակարդակում հանդիսանում է թիվ մեկ պետական պաշտոնյան, որը վերահսկողություն է իրականացում սահմանադրական համակարգի լեգիտիմության նկատմամբ և մասնակցում է քաղաքական համակարգի ձևավորմանն ու գործունեությանը (Й. Изензее, П. Кирхофф, Государственное право Германии, Москва, 1994, էջ 225-230):

Անդրադառնալով ՀՀ Նախագահի կարգավիճակի՝ Սահմանադրության երաշխավորի բաղադրիչին, կարելի է փաստել, որ Նախագահն այն իրացնում է Սահմանադրության պահպանմանը հետևելով, ինչն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերոնշյալ հոդվածում: Սահմանադրության փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել ՀՀ Նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառնությունների իրականացման երկու հիմնական դրսևորում՝ օրենքների և պետական իշխանության մարմինների ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության նկատմամբ վերահսկողություն, որն իրականացվում է Նախագահի կողմից նշված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշման նպատակով Սահմանադրական դատարան դիմելու միջոցով և պետական իշխանության մարմինների համակարգի և լայն առումով քաղաքական և պետական կարգի սահմանադրական գործունեությանը նպաստելուն և աջակցելուն նպատակաուղղված լիազորություններ¹: Օրենքների և այլ իրավական ակտերի՝ ՀՀ ազգային ժողովի որոշումների, կառավարության և վարչապետի որոշումների և այլ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության որոշման հարցում Նախագահի ակտիվ դերակատարումը շատ կարևոր է սահմանադրական կարգի գործունե պահպանությունն ու պաշտպանությունն ապահովելու տեսակետից, դրա շնորհիվ մեծանում է երկրի իրավական համակարգը հակասահմանադրական նորմերից հնարավորինս զերծ պահելու հավանականությունը²: Մակայն այդպիսով Նախագահն ամեննին չի փոխարինում սահմանադրական արդարադատության մարմինն՝ Սահմանադրական դատարանին: Լինելով արտադատական մարմին՝ Նախագահը չի կարող վերջնական որոշում կայացնել սահմանադրականության խնդիրների վերաբերյալ: Փոխարենը նրա պարտականությունն է այդ խնդիրների վրա

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 129-րդ հոդվածի 1-ին մաս, 168-րդ հոդվածի 4-րդ մաս, 131-րդ հոդված, 133-135-րդ հոդվածներ, 137-138-րդ հոդվածներ, 149-150-րդ հոդվածներ, 166-րդ հոդվածի 1-ին, 3-4-րդ, 6-7-րդ մասեր:

² ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հիմնավորումներ, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf>, էջ 37:

ժամանակին հրավիրել Սահմանադրական դատարանի ուշադրությունը: Սահմանադրականության պահպանման գործում Նախագահը փաստորեն կատարում է կանխարգելիչ գործառույթ¹: Ինչ վերաբերում է քաղաքական-պետական կարգի սահմանադրական գործունեությանը նպաստող լիազորություններին, ապա Նախագահը դրանց գործադրման միջոցով հանդես է գալիս սահմանադրական նորմերի պաշտպանի դերում:

Մեր համոզմամբ, Սահմանադրության պահպանմանը հետևելու Նախագահի գործառույթը կառավարման բոլոր ձևերում և, հատկապես, խորհրդարանական համակարգում չի հանգում միայն Սահմանադրության նորմերի ձևական պահպանմանը և, հետևաբար, պետական իշխանության մարմինների՝ դրանցից բխող լիազորությունների իրացմանը հետևելուն: Սահմանադրության պահպանումը ենթադրում է նաև քաղաքական, սովորութային, ազգային, բարոյահոգեբանական և բազմաթիվ այլ գործոնների առկայություն և համադրում, որոնք միտված են Սահմանադրության հիմնարար սկզբունքների իրագործմանը, Սահմանադրության «ոգու» պահպանմանը: Բնականաբար, այդպիսի սկզբունքներ և պետական քաղաքականության հիմնադրույթներ են պարունակվում նաև ՀՀ Սահմանադրության փոփոխություններում²: Ուստի, նախ, ակնկալվում է սահմանադրականության կանոններով պետական իշխանության մարմինների համակարգի անխափան գործունեություն, որը հիմնված է ոչ միայն քաղաքական, այլև լայն իմաստով պետական և ազգային շահի գիտակցված իրացման հրամայականի վրա: Նման սահմանադրական իրողության պարագայում կապահովվի սահմանադրական կարգի լիարժեք գործողությունը, որն ի վերջո հիմնված է հասարակության բնականոն զարգացման և հասարակության անդամների բարեկեցության ընդհանուր տեսլականի վրա:

ՀՀ Նախագահը հիշյալ նկատառումով պետք է ունենա համարժեք կարգավիճակ՝ վերը նշված գործառույթների արդյունավետ իրականացման համար: Փաստացի Նախագահը կոչված է նպաստելու և աջակցելու սահմանադրական պետական համակարգի հանրօգուտ և անխափան գործունեությանը, որը հենց երաշխիք է ստեղծում

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նաև ՀՀ սահմանադրության (փոփոխություններով) 1-3 գլուխներ:

մարդկանց և քաղաքացիների բարեկեցության համար: ՀՀ Սահմանադրության փոփոխություններով Հանրապետության Նախագահի՝ որպես Սահմանադրության պահպանման երաշխավորի և, համապատասխանաբար, պետական իշխանության մարմինների իրավահարաբերություններում «արբիտրի» լիազորությունները՝ ուղղված նշված խնդիրների լուծմանը, հանդիսանում են ՀՀ սահմանադրական կարգի պաշտպանության կարևոր երաշխիք: Այդպիսի լիազորություններ են հանդիսանում պետական իշխանության բարձրագույն մարմինների սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերով Սահմանադրական դատարան դիմելը, պետական իշխանության մարմինների ձևավորմանը և պաշտոնատար անձանց նշանակմանը մասնակցելը, դատապարտյալներին ներում շնորհելը և այլն: Հանրապետության Նախագահի այս լիազորությունները հավասարակշռող ազդեցություն ունեն՝ ըստ սահմանման քաղաքական բնույթ ունեցող օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների վրա, նպաստում են խորհրդարանի և կառավարության ներդաշնակ գործունեությանը և համակեցությանը՝ կանխելով կամ կանխարգելելով իշխանության ճյուղերի և լայն առումով քաղաքական ուժերի միջև տարաձայնությունների կամ առճակատումների դեպքերում սահմանադրական կարգի խաթարումը: Այդպիսի բախումային իրավիճակներում Նախագահը փաստորեն նման է «պահեստային ուժի», որը հիմնական քաղաքական-պետական դերակատարների՝ Ազգային ժողովի և (կամ) կառավարության անգործության դեպքում գործադրում է իր «քաղաքական ներուժը» և դրան համապատասխան «ձգնաժամային» լիազորությունների զինանոցը՝ հանդես գալով սահմանադրական կարգի պաշտպանի դերում: Այդպիսով, Նախագահը հնարավորություն է ունենում նպաստել սահմանադրական մարմինների բնականոն գործունեությանը և հակակշիռների և զսպումների համակարգի արդյունավետ իրացմանը, ներազդել ընդհանուր վերցրած պետության կադրային քաղաքականության վրա, նպաստել արդարադատության խնդիրների լուծմանը և այլն:

Այդուհանդերձ հարկ է նշել, որ Սահմանադրության փոփոխություններով ՀՀ Նախագահի մասնակցությունը պետական իշխանության մարմինների և, հատկապես, կառավարության ձևավորմանը կրում է սահմանափակ և առավելապես արարողակարգային

բնույթ, ինչը, կարծում ենք, բավարար երաշխիքներ չի ստեղծում այս հարցում Ազգային ժողովի և, մասնավորապես խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքը հակակշռելու և որպես սահմանադրակարգի պաշտպան և «արբիտր»՝ պետական իշխանության մարմինների համակարգի՝ սահմանադրական վարքագծին աջակցելու համար: Այսպես, համաձայն փոփոխված Մահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի, Նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության կողմից առաջադրված անձին, իսկ, եթե վարչապետ չի ընտրվում, Նախագահն արդեն անհապաղ վարչապետ է նշանակում նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով Ազգային ժողովի կողմից ընտրված անձին: Փաստորեն կառավարության ղեկավարի նշանակման հարցում Նախագահը հնարավորություն չունի իրացնել պետության գլխի և Մահմանադրության պահապանի իր կարգավիճակից բխող այն նվազագույն նախաձեռնողականությունը, որը բնորոշ է խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում պետության գլխին, քանզի փոփոխված Մահմանադրության 149-րդ հոդվածով Նախագահին ոչ հնարավորություն է տրված Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանը առաջադրել վարչապետի թեկնածուին և ոչ էլ բավարար ժամկետ է թողնված՝ քննարկելու և որոշում կայացնելու խորհրդարանի կողմից ընտրված թեկնածուի վերաբերյալ: Այդպիսով բացառվում է Նախագահի առարկայական դերը գործադիր իշխանության ղեկավարի նշանակման գործում: Ավելին՝ փոփոխված Մահմանադրության 149-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդարանը ոչ թե ընտրում է վարչապետի թեկնածուին, որը հետագայում կարող է հաստատվել կամ չհաստատվել Նախագահի կողմից, այլ հենց ինքն էլ ընտրում է վարչապետին, իսկ Նախագահը միայն կրկնաստորագրում է խորհրդարանի որոշումը՝ առանց դրան հակադրվելու կամ այն մերժելու իրավունքի: Հարկ է նշել, որ այս հարցի շուրջ խորհրդարանական հանրապետությունների սահմանադրաիրավական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախագահը բավականին ակտիվ դերակատարում ունի վարչապետի նշանակման գործում: Մասնավորապես, այնպիսի խորհրդարանական հանրապետություններում, ինչպիսիք են՝ Գերմանիան, Բուլղարիան, Լատվիան, Հունգարիան, Չեխիան և այլ երկրներ, Նախագահը կամ առաջադրում է վարչապետի թեկնածուին

(կամ նշանակում է վարչապետին, որը հետագայում կառավարության ողջ կազմի հետ պետք է ստանա խորհրդարանի վստահությունը), կամ ունի ողջամիտ ժամկետում խորհրդարանի ներկայացրած թեկնածուին հաստատելու կամ մերժելու իրավունք (կամ ուղղակիորեն որևէ կոնկրետ ժամկետ չի սահմանվում և՛ կամ այդ ժամկետը բավական երկար է), կամ էլ Նախագահի և խորհրդարանի նախաձեռնողականության տարրերը համադրված են, եթե Նախագահի կողմից ներկայացված վարչապետի թեկնածուն խորհրդարանի կողմից չի հաստատվում, Նախագահին թեկնածու է առաջադրում խորհրդարանը¹:

Կառավարության անդամների նշանակման հարցում ևս Հանրապետության Նախագահը չունի հայեցողության ողջամիտ շրջանակ: Ըստ փոփոխված Մահմանադրության 150-րդ հոդվածի 1-ին մասի՝ Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում է փոխվարչապետերին և նախարարներին: Նախագահը չունի անհրաժեշտ սահմանադրաիրավական լծակ քաղաքական, արդյունավետ կառավարման կամ որևէ այլ պատճառով չհամաձայնել վարչապետի կողմից ներկայացված թեկնածուների նշանակման հետ, քանի որ համաձայն վերոնշյալ հոդվածի՝ Նախագահը կարող է հակադրվել վարչապետին, միայն եթե հիմքեր ունի որ կառավարության անդամները և(կամ) դրանց նշանակման գործընթացը չեն համապատասխանում Մահմանադրության պահանջներին: Ընդ որում, եթե Նախագահը քաղաքական կամ այլ պատճառներով չի կատարում 150-րդ հոդվածի պահանջները և սահմանված 3-օրյա ժամկետում չի նշանակում կառավարության անդամներին, ապա նրանք համարվում են նշանակված իրավունքի ուժով: Փաստորեն այս դեպքում ևս Նախագահը որոշում ընդունելու հարցում ժամկետային առումով խստորեն սահմանափակված է, ինչը բնականաբար ազդում է կառավարության ձևավորման պրոցեսում նրա գործունակության վրա: Ստացվում է, որ փոփոխված Մահմանադրությամբ նախատեսված

¹ Տե՛ս Գերմանիայի Հիմնական օրենքի 63-րդ հոդված, Իտալիայի Մահմանադրության 92-րդ, 94-րդ հոդվածներ, Լատվիայի Մահմանադրության 56-րդ, 59-րդ հոդվածներ, Հունգարիայի Մահմանադրության «Պետություն» բաժնի 16-րդ հոդվածի 3-6-րդ մասեր, Չեխիայի Մահմանադրության 68-րդ հոդվածի 2-4-րդ մասեր:

խիստ կարճ ժամկետը լրանալուց հետո ՀՀ Նախագահը զրկվում է նախարարների որպես գործադիր իշխանության ոլորտային հիմնական պատասխանատուների նշանակման գործում որևէ մասնակցությունից և, հետևաբար, վարչապետին և խորհրդարանին աջակցելու հնարավորությունից: Ինչպես և վարչապետի ընտրության պարագայում, նախարարների և փոխվարչապետների ընտրության գործընթացում Նախագահի դերի և լիազորությունների վերաբերյալ մեր մտահոգությունները նույնն են. ՀՀ Նախագահը հանդիսանում է պետության գլուխ, Սահմանադրության պահպանմանը հետևող բարձրագույն պաշտոնատար անձ և իրավաբար, հետևաբար պետք է ունենա թեկուզ սահմանափակ, բայց որոշակի իրավաքաղաքական հետևանքներ ունեցող մասնակցություն թե՛ վարչապետի և թե՛ կառավարության մյուս անդամների նշանակման գործում:

Գործադիր իշխանության ձևավորումն ու գործունեությունը համակողմանիորեն կշռադատված և տարաբնույթ շահերի հավասարակշռմամբ կայացված քաղաքական որոշման հիման վրա շատ կարևոր է պետական իշխանության համակարգի գործունեության համար, և դրա համար իշխանության այս ճյուղի բարձրագույն մարմնի՝ կառավարության ձևավորմանը պետք է մասնակցեն (վարչապետի նշանակումից հետո) Նախագահը, վարչապետը և խորհրդարանը: Միջազգային սահմանադրական փորձի ուսումնասիրման արդյունքները ևս խոսում են այն մասին, որ խորհրդարանական կառավարմամբ այլ պետություններում Նախագահը վարչապետի և խորհրդարանի հետ մեկտեղ, իր կարգավիճակից բխող սահմանափակումներով հանդերձ, մասնակցում է կառավարության անդամներին նշանակելու հարցում և հնարավորություն ունի չհաստատել վարչապետի ներկայացրած թեկնածությունը կամ թեկնածությունների և հակադրվել վարչապետին, իսկ խորհրդարանը այս կամ այն կերպ հաստատում է կառավարության կազմը՝ կա՛մ ուղղակիորեն, կա՛մ կառավարության ծրագրին հավանություն տալու միջոցով¹:

¹ Տե՛ս Գերմանիայի Հիմնական օրենքի 64-րդ հոդված, Իտալիայի Սահմանադրության 92-րդ, 94-րդ հոդվածները, Լատվիայի Սահմանադրության 56-րդ, 59-րդ հոդվածները, Հունգարիայի Սահմանադրության «Պետություն» բաժնի 16-րդ հոդվածի 7-րդ մասը, Չեխիայի Սահմանադրության 68-րդ հոդվածի 2- 5-րդ մասերը, Հնդկաստանի Սահմանադրության 75-րդ հոդվածի 1-3-րդ մասերը:

Փոփոխված Սահմանադրության 138-րդ հոդվածով նախատեսված է Հանրապետության Նախագահի լիազորությունը նշանակել ժամանակավոր պաշտոնակատարներ, երբ Ազգային ժողովն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով նշանակումներ չի կատարում փոփոխված Սահմանադրությամբ նախատեսված պետական պաշտոններում: Խոսքը գնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի նախագահի և անդամների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների մասին: Մեր կարծիքով՝ Նախագահի այս լիազորության ամրագրումը ՀՀ Սահմանադրության փոփոխություններում շատ կարևոր է և ողջունելի, սակայն այն կարող էր առավել ընդգրկուն լինել և ներառել Նախագահի իրավունքն Ազգային ժողովին առաջադրել համապատասխան թեկնածուներին կամ հաստատել Ազգային ժողովի ներկայացրած թեկնածուներին: Այդպիսով Նախագահի՝ սահմանադրական կարգի երաշխավորի գործառույթը կդառնար առավել գործուն, քանի որ նա լիարժեք ներգրավված կլիներ պետական համակարգի առանցքային օղակների ձևավորման գործին և կհավասարակշռեր Ազգային ժողովի լիազորությունները: Դա գործընթացը կդարձներ առավել ճկուն և կսահմանափակեր ճգնաժամային իրավիճակների առաջացման հնարավորությունը: Նշենք, որ խորհրդարանական շատ հանրապետություններում Նախագահի լիազորություններն առավել ընդարձակ են պետական պաշտոնների նշանակման հարցերում¹:

Հանրապետության Նախագահի կարգավիճակի և լիազորությունների առնչությամբ ՀՀ Սահմանադրության փոփոխություններում առկա նշյալ խնդիրների բարձրացումը, անշուշտ, չեն բացառում Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից նման իրավակարգավորման սահմանման ռացիոնալ հիմնավորումների առկայությունը: Ըստ էության Սահմանադրության փոփոխություններով փորձ է արվել հնարավորին չափ սահմանափակել Նախագահի հնարավորությունը սուբյեկտիվ կամարտահայտմամբ մի-

¹ Տե՛ս Գերմանիայի Հիմնական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մաս, Հունաստանի Սահմանադրության 46-րդ հոդվածի 1-ին մասը և այլն:

ջամտել իշխանության ճյուղերի գործունեությանը և փոխգործակցությանը՝ ստեղծելով համապատասխան ինստիտուցիոնալ հիմքեր, որպեսզի Նախագահն իրականացնի լոկ անկողմնակալ իրավարարի գործառույթ: Հաշվի առնելով, որ Հայաստանն անկախությունից ի վեր եղել է ուժեղ Նախագահի ինստիտուտով կիսանախագահական հանրապետություն՝ մեծ է ռիսկը, որ Նախագահը երկրում ձևավորված նախագահակենտրոն քաղաքական ավանդույթի ուժով կփորձի դուրս գալ Սահմանադրության երաշխավորի և արբիտրի գործառույթների շրջանակից և ֆորմալ ու ոչ ֆորմալ ներազդեցություն ունենալ հատկապես գործադիր իշխանության ձևավորման և գործունեության վրա՝ այդպիսով անցնելով իր լիազորությունների շրջանակը և խախտել խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում Նախագահի կարգավիճակի տրամաբանությունը¹:

¹ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում որպես Հայաստանի պետաիշխանական համակարգի հիմնական համակարգային թերություններ նշվել են իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացումը, գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի աններդաշնակությունը, իշխանության մարմինների գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների անհաշվեկշռվածությունը, իշխանության տարբեր ճյուղերի ոչ պատշաճ գործունակությունը և ոչ բավարար գործառույթային անկախությունը, պետական իշխանության մարմինների հանրային-իրավական պատասխանատվության անհստակությունը և որպես հետևանք պետական իշխանության մարմինների համակարգում ստվերային հարաբերությունների և սուբյեկտիվիզմի դրսևորումները (էջ 8-9): Այս համատեքստում Հայեցակարգում ընդգծվում է Նախագահի կարգավիճակի վերանայման անհրաժեշտությունը: Հայեցակարգում հստակ արձանագրվում է, որ Հանրապետության Նախագահի գործառույթների ու լիազորությունների միջև ապահովված չէ անհրաժեշտ համամասնականություն: Մասնավորապես, բավարար չափով հստակեցված չեն Նախագահի լիազորությունները գործադիր իշխանության իրականացման և Սահմանադրության պահպանման գործառույթների իրականացման բնագավառներում: Ի մասնավորի առկա է գործադիր իշխանության երկվություն՝ պայմանավորված Նախագահի և կառավարության գործառույթային լիազորություններով (էջ 28): Փաստելով գործադիր իշխանության ոլորտում Նախագահի ընդարձակ լիազորությունների առկայությունը՝ Հայեցակարգում մտահոգություն է հայտնվում առ այն, որ խորհրդարանում Նախագահին սատարող բացարձակ մեծամասնության առկայության և ներխորհրդարանական հակակշիռների բացակայության պայմաններում նախագահա-

Համաձայնելով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հեղինակների այս մտահոգությանը՝ այդուհանդերձ կարևոր է սահմանել այնպիսի նորմատիվ և համակարգային երաշխիքներ, որպեսզի չստեղծվի հակառակ իրավիճակը՝ Նախագահը չվերածվի բացառապես արարողակարգային բնույթ ունեցող պետական ինստիտուտի: Համապատասխան նորմատիվ կարգավորումների միջոցով անհրաժեշտ է հավասարակշռել Ազգային ժողովի և կառավարության գործառույթային անկախությունը մի կողմից և Նախագահի հավասարակշռող և սահմանադրական կառուցակարգերի բնականոն գործունեությունը խթանող դերը մյուս կողմից: Մասնավորապես Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքով կարելի է սահմանել վարչապետի պարտականությունն Ազգային ժողովին կառավարության ծրագիրը ներկայացնելիս առանձնահատուկ անդրադառնալ իր կողմից առաջադրված կառավարության անդամների՝ փոխվարչապետերի և նախարարների այն թեկնածուներին, որոնց Նախագահը հրաժարվել է նշանակել կամ այլ պատճառով Նախագծով սահմանված 3-օրյա ժամկետում չի նշանակել, և նրանք նշանակված են համարվել իրավունքի ուժով և ներկայացնել այդ անձանց՝ նախարարի կամ փոխվարչապետի թեկնածու առաջադրելու հիմնավորումները: Այդպիսով կուրվագծվի ՀՀ վարչապետի հանրային-քաղաքական պատասխանատվությունը կառավարության ձևավորման գործընթացում իր կողմից որդեգրված կադրային քաղաքականության համար: Դրանով հավելյալ կշիռ և ազդեցություն կհաղորդվի Նախագահի կողմից համապատասխան նախարարին կամ փոխվարչապետին պաշտոնի չնշանակելու ակտին, որով Նախագահը հնարավորություն է ստանում իր քաղաքական դիրքորոշումն արտահայտել վարչապետի կադրային մոտեցումների և ապագա կառավարության նկատմամբ, ինչը նշված օրենսդրական կարգավորման առկայությամբ կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ ինչպես վարչապետի և կառավարության, այնպես էլ խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի հանրային վարկանիշի և գործունակության վրա: Այն կարող է նաև նախադրյալ հանդիսանալ Ազգային ժողովի կող-

կան իշխանությունն ստանում է բացարձակ բնույթ, և հետևանքաբար մեծանում է նախագահի քաղաքական մենիշխանության վտանգը: Այս իրողության հիմնական պատճառներից է օրենսդիր և գործադիր իշխանության կողմից գործուն հակակշիռների բացակայությունը (էջ 28):

մից կառավարության ծրագիրը չհաստատելու, վարչապետին անվտանգություն հայտնելու, կառավարությանը վստահություն չհայտնելու կամ համապատասխան նախարարի կամ փոխվարչապետի պաշտոնավարման նպատակահարմարության հարցը վարչապետի առջև բարձրացնելու համար: Փաստորեն լրացուցիչ երաշխիքների ներդրման պարագայում ՀՀ Նախագահի կողմից կառավարության անդամների թեկնածուների չհաստատումը կարող է լուրջ հակակշիռ դառնալ Ազգային ժողովի (մասնավորապես ի դեմս խորհրդարանի քաղաքական մեծամասնության) և վարչապետի նկատմամբ: Նախագահի անձնական հատկանիշներն ու վարկանիշը, ինչպես նաև փաստացի գործողությունները ևս կարող են հավելյալ կշիռ հաղորդել Նախագահի նշված լիազորությանը: Մասնավորապես, Նախագահը նախարարների կամ փոխվարչապետների թեկնածությունների հետ իր անհամաձայնության մասին կարող է հայտարարել հրապարակայնորեն՝ զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ եղանակով՝ դրանով իսկ ճնշում գործադրելով համապատասխան թեկնածուներին առաջադրած վարչապետի և անուղղակիորեն նաև խորհրդարանական մեծամասնության վրա:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 148-րդ հոդվածի տարածական մեկնաբանման դեպքում կարելի է նաև ընթացիկ օրենսդրությամբ սահմանել յուրաքանչյուր նախարարության գործառույթներով պայմանավորված՝ համապատասխան նախարարի կրթական և մասնագիտական պատրաստվածության լրացուցիչ պահանջ-չափանիշներ: Նման պահանջներ կարելի է սահմանել նաև փոխվարչապետների համար: Այդպիսի իրավակարգավորման պարագայում վարչապետը հնարավորություն չի ունենա դրսևորել քաղաքական-կուսակցական կամ անձնական սուբյեկտիվություն և նախարարի կամ փոխվարչապետի պաշտոնում Նախագահին առաջարկել մասնագիտական կամ քաղաքական առումով «անպատրաստ» անձի: Դա թույլ կտա որոշ չափով հավասարակշռել կառավարության ձևավորման հարցում Նախագահի և վարչապետի՝ առաջին հայացքից անհամաչափ լիազորությունները:

Խորհրդարանական համակարգի շրջանակներում ՀՀ Նախագահի և պետական իշխանության ճյուղերի կառուցակարգային կայացման համար չափազանց կարևոր է Հայաստանի քաղաքական մշակույթի զարգացումը: Մասնավորապես, պետք է զարգանա ՀՀ

կուսակցական համակարգը, կուսակցությունները պետք է լինեն պատասխանատու և հանրության առջև հաշվետու քաղաքական կառույցներ: Որպես հետևանք Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն ստացած կուսակցությունը կամ դաշինքն առավել մեծ պատասխանատվությամբ կմոտենա վարչապետի թեկնածուի առաջադրմանը, իսկ վերջինս՝ որպես իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչ, կձգտի իբրև կառավարության անդամների թեկնածուներ ներկայացնել մասնագիտական և քաղաքական անհրաժեշտ որակներ և դրական հանրային ընկալում ունեցող անձանց: Քաղաքական-կուսակցական համակարգի կայացումը չի կարող տեղի ունենալ առանց ընտրողների իրավագիտակցության բարձրացման, որոնք պետք է ունակ լինեն համարժեք գնահատել իշխող քաղաքական ուժի քաղաքականությունը կադրային և մյուս հարցերում՝ համապատասխանաբար կրկին անգամ վստահելով կամ վստահությունից զրկելով այդ քաղաքական միավորին ընտրությունների ժամանակ: Քաղաքացիների և կուսակցությունների միջև նման կապի առկայությունը մեծապես նպաստում է ամբողջ քաղաքական համակարգի անխափան գործունեությանը: Ընդհանրապես իրավագիտակցության և սահմանադրական մշակույթի զարգացումն է, որ կհանգեցնի պետական ինստիտուտների սահմանադրական կարգավիճակի, դերի և նշանակության լիարժեք դրսևորմանը, իրացմանը, կբացառի կամ կսահմանափակի պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև ստվերային և ոչ ֆորմալ հարաբերությունների ձևավորումը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Մահմանադրության փոփոխություններով ՀՀ Նախագահի կարգավիճակի և լիազորությունների միանգամայն նոր համակարգի ներդրմամբ կառուցակարգային հիմքեր են ստեղծվում Նախագահի իրավական կարգավիճակի և լիազորությունների հստակեցման և երկրի սահմանադրական համակարգում առկա մենիշխանության ռիսկերը սահմանափակելու համար: Փոփոխված Մահմանադրությամբ Նախագահի իրավական կարգավիճակը սահմանելիս շեշտը դրվում է հենց Մահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի վրա, և համապատասխան երաշխիքներ են սահմանվում Նախագահի կողմից իր այս գործառույթը պատշաճորեն իրականացնելու համար: Միաժամանակ վերոգրյալի լույսի ներքո կարևոր է արձանագրել, որ Մահմանադրության փոփոխություններով նախատեսվում է ավելի թույլ Նախագահի ինս-

տիտուտ, քան շատ խորհրդարանական հանրապետությունների Սահմանադրություններ, այդ թվում Նախագահի՝ Սահմանադրության երաշխավորի գործառնության համատեքստում: Ընդ որում, նման գնահատական տեղ է գտել նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի երկրորդ նախնական կարծիքում¹:

Մեր կարծիքով, Սահմանադրության փոփոխություններով ՀՀ Նախագահի լիազորությունները կարող էին լինել առավել նշանակալից հատկապես այն հարցերում, որոնց լուծմանը մասնակցում են միաժամանակ և՛ օրենսդիր, և՛ գործադիր իշխանությունները, քանի որ նրանց միջև առաջացող քաղաքական մրցակցությունը և հնարավոր կոլիզիաները կարող են վնասել սահմանադրակարգի կայունությանը: Բնականաբար գործուն լիազորություններով իրավաբար Նախագահի մասնակցությունը նման խնդիրների լուծմանը բավականին օգտակար կլիներ: Այդպիսի որոշ հարցերի անդրադարձ եղավ հոդվածի համապատասխան մասում:

Այդուհանդերձ, չնայած շատ դեպքերում իր խորհրդանշական կարգավիճակին և սահմանափակ լիազորություններին՝ ՀՀ Նախագահը խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում չի լինելու «դեկորատիվ ֆիգուր»: Ցանկացած պետություն պետք է ունենա այնպիսի ինստիտուտ, որը հետևի սահմանադրական կարգի պահպանմանը, խորհրդանշի ինքնիշխան պետականությունն ու ազգի միասնությունը, հաշտարարի դեր կատարի պետական իշխանության տարբեր մարմինների միջև վեճերի և բախումների ժամանակ՝ թույլ չտալով դրանց արտասահմանադրական լուծումներ: Ճգնաժամային իրավիճակներում հենց այդպիսի ներդաշնակեցնող և վերկուսակցական ինստիտուտն է կոչված թույլ չտալ սահմանադրական կարգի խաթարում և սահմանադրական իրավահարաբերությունների ձևախեղում: Նման ինստիտուտի դերում ՀՀ-ում հանդես է գալու հենց Նախագահը:

Ինչպես իրավացիորեն նշում են սահմանադրագետներ Իզենգետեն և Կիրիոֆը, (խորհրդարանական հանրապետություններում) Նախագահի մոտ քաղաքական նշանակալից իշխանության բացա-

¹ Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ երկրորդ նախնական կարծիք Մտրասբուրգ, 2015, http://moj.am/storage/uploads/nakhnakan_karciq1.pdf, էջ 13:

կայությունն ինչ-որ առումով նրա ուժի հիմքն է, որը դրսևորվում է հասարակության քաղաքականության վրա հոգևոր ներգործությամբ: Նախագահը միավորում է այն, ինչ միավորում է բոլորին: Այդպիսով նա կարծես մարմնավորում է սահմանադրության ոգին¹: Հետևաբար, ՀՀ Նախագահի ֆորմալ լիազորությունների սահմանափակ շրջանակը, թեև որոշ առումով դժվարացնում է նրա՝ որպես Սահմանադրության երաշխավորի կարգավիճակի ամբողջ ներուժի իրացումը, սակայն չի կարելի պնդել, որ այդպիսով Նախագահը մնում է պասիվ դիտորդի դերում: Վերջինս գործուն մասնակցություն կունենա պետականաշինության և սահմանադրական կարգի պաշտպանության գործում՝ ելնելով ոչ միայն պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում Նախագահի ինստիտուտի կարևորությունից և «պահանջվածությունից», որպիսի հանգամանքը տեսանելի է նաև այլ պետությունների սահմանադրական փորձն ուսումնասիրելիս, այլև Հայաստանի հասարակության իրավագիտակցության և քաղաքական պրակտիկայի առանձնահատկություններից. Նախագահի որպես անձ-ինստիտուտի բարձր հեղինակությունն ու դրական հանրային ընկալումը Հայաստանում թույլ են տալիս փաստել, որ այս պետական ինստիտուտը, թեև փոփոխված կարգավիճակով, շարունակելու է նշանակալից ազդեցություն ունենալ հանրային-պետական կյանքում:

¹ Ств І. Изензее, П. Кирхофф, նշվ. աշխ., էջ 238:

Арташес Халатян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

ПРЕЗИДЕНТ РА КАК ГАРАНТ КОНСТИТУЦИИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ

Данная статья посвящена статусу Президента РА, как гаранту конституции в свете конституционных реформ. В статье представлены и проанализированы основные черты Президента РА в качестве гаранта Конституции, которые предусмотрены в Проекте поправок к Конституции РА и определяют его место и роль в системе высших органов государственной власти Армении. В статье так же представлены проблемные вопросы теории и практики, связанные с исследуемым вопросом. На основе проведенного анализа в статье сделаны определенные выводы и выдвинуты предложения по решению поднятых научных вопросов. В целях наиболее многостороннего исследования предмета статьи представлена так же международная конституционная практика.

Artashes Khalatyan

PHD Student of the YSU Chair of Constitutional Law

THE RA PRESIDENT AS A GUARANTOR OF THE CONSTITUTION IN LIGHT OF THE CONSTITUTIONAL REFORMS

The article is devoted to the status the RA President as a guarantor of the Constitution in light of constitutional reforms. The article presents description and analysis of the President's main features in the capacity of the guarantor of the Constitution prescribed in the Draft Amendments to the Constitution which establish the place and role of the RA President within the system of supreme state bodies of Armenia. The article also elucidates theoretical and practical issues related to the research topic. Based on the analysis performed respective conclusions and suggestions are made. For the purpose of more comprehensive examination of the subject of the article relevant international constitutional practice is also discussed.

Բանալի բառեր՝ ՀՀ Սահմանադրություն, Նախագահ, Ազգային ժողով, Կառավարություն, Վարչապետ խորհրդարանական կառավարման ձև, համակարգ, ինստիտուտ, ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, ՀՀ սահմանադրության փոփոխությունների նախագիծ, կարգավիճակ, լիազորություններ:

Ключевые слова: Конституция РА, Президент, Национальное собрание, Правительство, Премьер-министр, форма правления, система, институт, Концепция конституционных реформ РА, Проект поправок в Конституцию РА, статус, полномочия

Key words: RA Constitution, President, National Assembly, Government, Prime minister, form of government, system, institute, Conception of the RA Constitutional Reforms, Draft Amendments to the Constitution, status, powers